



Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Չարենցավան համայնք

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք

Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1

Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Չարենցավան համայնքի ղեկավարին կից զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի նիստի

Ք. Չարենցավան

8.02.2018

Չարենցավան համայնքի ղեկավարի կից զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի նիստը վարում էր խորհրդակցական մարմնի նախագահ Հակոբ Շահգալոյանը, նիստին ներկա էին անդամներ՝

Վարդգես Չիլինգարյանը, Աշոտ Ծերունյանը, Պավել Գաբրիելյանը, Վարդան Մակինյանը, Գևորգ Հակոբյանը, Գառնիկ Բեգլարյանը, Արսեն Խլղաթյանը, Երեմ Սահակյանը:

Բացակայում էր Հակոբ Գրիգորյանը:

Հակոբ Շահգալոյանին հրավերով նիստին մասնակցում էին՝

«Մշակույթ» ՀՈԱԿ-ի տնօրեն Արթուր Աբգարյանը, քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի պետ Բենիկ Բալբաբյանը, համայնքապետարանի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սուրեն Մուրադյանն ու բաժնի մասնագետները :

Ներկայացնում եմ նիստի օրակարգը՝

1. Չարենցավանի կինոթատրոնի շենքի վերաբերյալ քննարկում
Նախագծի հեղինակ՝ Գ.Հակոբյան
2. Քաղաքի ոռոգման ցանցի մեծացում:
Նախագծի հեղինակ՝ Վ.Մակինյան
3. Չարենցավան համայնքի գարգացման հնգամյա ծրագրի մեջ ընդգրկվելու համար նախագծերի քննարկում:
Զեկուցող՝ Աշոտ Ծերունյան

Համայնքապետը քննարկման դրեց նիստի օրակարգը:

Օրակարգն ընդունված է:

-Լսեցին

նիստի օրակարգի առաջին կետը՝ Չարենցավան համայնքի կինոթատրոնի հարցը:

-Զեկուցեց նախագծի հեղինակ Գևորգ Հակոբյանը՝

Շենքը վատ վիճակում է, սանհանգույցներն անմխիթար վիճակում են, տանիքը կաթում է, հարկավոր է ներդրողներ գտնել շենքը շահագործման ենթարկելու համար:

Համայնքապետ Հակոբ Շահգալդյան՝

Կինոթատրոնի շենքը սեփականության իրավունքով փոխանցված է Հայ առաքելական եկեղեցուն:

-Որոշվեց

Նամակ ուղարկել Կոտայքի թեմի առաջնորդ Տեր Առաքել եպիսկոպոս Քարամյանին՝ կինոթատրոնի շենքի հետ կապված առաքելական եկեղեցու ծրագրերին ծանոթանալու համար:

Հակոբ Շահգալոյան՝

Որոշումը դնում եմ քննարկման:

Կողմ՝ 7, դեմ՝ 0,

ձեռնպահ՝ 1 /Վ.Զիլինգարյան/

Որոշումն ընդունված է:

Լսեցին նիստի օրակարգի երկրորդ հարցը՝ Ոռոգման ցանցի մեծացում

Ջեկուցեց նախագծի հեղինակ Վարդան Մակինյանը:

Առաջարկում է.

Այգեստան թաղամասի ոռոգման համակարգի ուսումնասիրություն, ցանցի վերականգնում: Կան շահառուներ:

Լսեցին «Մշակույթ» ՀՈԱԿ-ի տնօրեն Արթուր Աբգարյանին:

-Ցանցը ուսումնասիրված է, «ԿՈՏԱՅՔ» ջրօգտագործողների ընկերության հետ կան պայմանավորվածություններ:

Լսեցին ԽՄ նախագահ Հակոբ Շահգալոյանին:

Առաջարկեց Վարդան Մակինյանին բերել շահառու բնակիչների դիմումները՝ հետագա աշխատանքների համար: Համայնքապետարանը կդառնա ծրագրի համաֆինանսավորող

Որոշվեց դիմումների հավաքումից հետո դիմել «Կոտայք» ԶՕԸ-ին:

Հակոբ Շահգալոյան՝

Որոշումը դնում եմ քննարկման:

Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունված է:

Լսեցին նիստի օրակարգի երրորդ հարցը՝ Չարենցավան համայնքի զարգացման

հնգամյա ծրագրի մեջ ընդգրկվելու համար նախագծերի քննարկում:

Ջեկուցող ` Աշոտ Ծերունյան

Չարենցավան քաղաքի զարգացման 5-ամյա ծրագրի մեջ ներառված են 10 հիմնական ծրագրեր, կարելի է դրանք փոփոխել, մտցնել նորերը՝ ըստ առաջնահերթության:

Առաջարկեց՝

- Գյուղական բնակավայրերի ավագանիներին առաջարկություններ բերել գյուղերի զարգացման ծրագրերը կազմելու համար:
- ԽՄ-ի անդամներին առաջարկություններ ներկայացնել ընդհանուր ծրագրի վերաբերյալ:

Հակոբ Շահգալդյան

Նախնական զարգացման ծրագրի նախագիծը դնում եմ քննարկման:

Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունված է:

Վարդգես Չիլինգարյան

Գևորգ Հակոբյան

Աշոտ Ծերունյան

Գառնիկ Բեգլարյան

Պավել Գաբրիելյան

Արսեն Խլղաթյան

Վարդան Մակինյան

Երեմ Սահակյան

Նիստն արձանագրեց Ս.Բալաբեկյանը _____

Խորհրդակցական մարմնի նախագահ՝

Հակոբ Շահգալդյան